ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
Ն-53

Գրանցված է Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում
«11» փետրվարի 2026 թ.
N Ն-53 (H-53) 2026
Ուժի մեջ է մինչև՝ «20» մայիս 2029թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Սյունիքի՝ շինարարական նյութերի փորձարկման լաբորատորիա «ՊՐՈՖ ԼԱԲ»-ը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը, չափանիշները և դեպքերը հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման մարմին նշանակվելու համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին (Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հունիսի 9-ի N 1591-Ա հրաման, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2026 թվականի փետրվարի 11-ի N 304-Ա հրաման)՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 083/T-144) N 1, N 2 և N 3 հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում ընդգրկված արտադրանքի/օբյեկտի անվանման, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրի, արտադրանքի/օբյեկտի նորմատիվ իրավական ակտի և/կամ ստանդարտացման փաստաթղթի նշագրի և/կամ անվանման, ցուցանիշների անվանման, այդ թվում՝ նմուշառման, փորձարկման, այդ թվում՝ նմուշառման, մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի, անվանման, կետի:

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ 34

էլ. հասցե: proflab.group@gmail.com, Հեռ. +374 (94) 55-29-21

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Սյունիքի՝ շինարարական նյութերի փորձարկման լաբորատորիա «ՊՐՈՖ ԼԱԲ»-ի նշանակման ոլորտը ներառում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետևյալ տեխնիկական կանոնակարգերը՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 607-Ն որոշում:

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 827 որոշմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 014/2011):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ
(ստորագրությունը)

2026-03-09 10:56:04 GMT+4
Հավաստված է ԷԿՆԳ-ի կողմից
mID

Կ.Տ.